Խաչիկ Դաշտենց

Զանգվի կամուրջը

Զուրը գնում է, կամուրջն է մնում,
Փա՛ռք գետի վրա կամուրջ կապողին,
Ճանապարհից լավ ի՛նչ կա աշխարհում,
Հազար-հազա՛ր փառք ճամփա շինողին:
Հրճվում է հոգին լավ խոսք լսելիս,
Լավ խոսքդ խառնիր դու Զանգու գետին,
Փա՛ռք նրան, ով որ ճամփով անցնելիս
Հիշում է նրան շինած վարպետին:
Կամուրջի տակով թող հոսի Զանգուն,
Փա՛ռք այս կամուրջով գնացողներին,
Ճամփորդը գնում, ճամփան է մնում,
Փա՛ռք մեր աշխարհի ճանապարհներին:
Երգն էլ հյուսվում է ճանապարհի հետ
Եվ նրա հետ էլ մնում է կանգուն,
Լավ երգն ու ճամփան ապրում են հավետ,
Փա՛ռք նրան, ով նոր ճամփան է երգում:
1945